- *Օգոստոսին տնտեսական ակտիվության աճի տեմպն աննշան դանդաղեց՝ հասնելով 5.6 տոկոսի (տ/տ)::*
- *Սեպտեմբերին գնաճի տեմպը նվազեց մինչև 0.6 տոկոս (տ/տ):*
- *Ոսկու և թանկարժեք զարդերի վերաարտահանումը շարունակեց մնալ արտահանման աճի հիմնական շարժիչ ուժը՝ չնայած անկման միտմանը:*
- *Զբոսաշրջությունից և արտերկից դրամական փոխանցումներից ստացված մուտքերն էականորեն նվազեցին 2024 թ. 1-ին կիսամյակում (տ/տ):*
- *Օգոստոսին պակասուրդն կուտակային բյուջեի մնացորդը հասցրեց ՀՆԱ-ի 0.8 տոկոսի:*
- *Վարկերի աճը շարունակում է գերազանցել ավանդների աճը:*

Օգոստոսին տնտեսական աճը դանդաղեց՝ հասնելով 5.6 տոկոսի (տ/տ՝ տվյալ ժամանակահատվածը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ), ինչն անկում էր հուլիսի 6.2 տոկոսից (տ/տ) (գծապատկեր 1)**:** Շինարարության և առևտրի ոլորտներում շարունակեց գրանցվել երկնիշ աճ (համապատասխանաբար 16.5 տոկոս և 14.9 տոկոս, տ/տ): Ծառայությունների ոլորտում (բացի առևտրից) ծառայությունների աճը ևս բարձր է եղել օգոստոսին՝ 9.5 տոկոս (տ/տ), ինչը հուլիսի 4.9 տոկոս (տ/տ) ցուցանիշի գրեթե կրկնապատիկն է: Սա պայմանավորված էր ֆինանսական, ապահովագրական, հյուրանոցային ու մասնագիտական ծառայությունների աճով: Արդյունաբերությունը շարունակել է աճել չափավոր՝ 2.1 տոկոսով. հանքարդյունաբերության ոլորտում 5.5 տոկոս (տ/տ) կրճատումը չեզոքացվել է վերամշակող արդյունաբերության 3.8 տոկոս (տ/տ) աճով, ինչը պայմանավորված էր օգոստոսին սննդամթերքի և ծխախոտի արտադրության ավելի մեծ ծավալներով: Հանրագումարում՝ Տնտեսական ակտիվության համաթիվը հունվարից մինչև օգոստոս աճել է 9 տոկոսով (տ/տ):

Ոչ առևտրային զուտ դրամական փոխանցումներն օգոստոսին կրճատվեցին 18.6 տոկոսով (տ/տ): Սա պայմանավորված էր ներհոսքերի ավելի մեծ անկմամբ (15.5 տոկոս, տ/տ)՝ արտահոսքերի համեմատ (9.8 տոկոս, տ/տ): Ռուսաստանից զուտ դրամական փոխանցումներն օգոստոսին կտրուկ նվազել են 31 տոկոսով (տ/տ)՝ նպաստելով ընդհանուր անկմանը (գծապատկեր 2):

Սեպտեմբերին գնաճը կազմել է 0.6 տոկոս (տ/տ)՝ նվազելով օգոստոսի 1.3 տոկոսից (տ/տ) (գծապատկեր 3): Սննդամթերքի գների մեկ տոկոս գնանկումն է եղել անկման հիմնական պատճառը: Միաժամանակ, տրանսպորտային ծառայությունների ոլորտում գնաճը սեպտեմբերին հասավ 9 տոկոսի (տ/տ): 2024 թ. հունվարից սեպտեմբեր ամիսներին միջին գնաճը եղել է համահարթ (զրո տոկոս):

Չնայած անկման միտմանը՝ օգոստոսին ոսկու և թանկարժեք քարերի վերաարտահանումը շարունակել է մնալ արտահանման աճի հիմնական շարժիչը: Ապրանքների արտահանման ծավալներն աճել են 58.1 տոկոսով (տ/տ), իսկ ներմուծման ծավալներն աճել են 18.7 տոկոսով (տ/տ): Արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի (այդ թվում՝ ոսկի և թանկարժեք զարդեր) եռապատիկ ավելացմամբ: Չհաշված այս խումբը՝ արտահանումն օգոստոսին աճել է 11 տոկոսով (տ/տ): 2024 թ. առաջին կիսամյակի վճարումների հաշվեկշռի տվյալները վկայում են, որ ապրանքների ոլորտում առևտրի պակասուրդը բարելավվել է, իսկ ծառայությունների ոլորտում հաշվեկշիռը վատթարացել է: Այսպես, զբոսաշրջությանն առնչվող ծառայությունների հաշվեկշիռը նվազել է 62 տոկոսով (տ/տ)՝ պայմանավորված 2024 թ. առաջին կիսամյակում զբոսաշրջային ժամանումների թվի 6.1 տոկոս անկմամբ (տ/տ) և մեկ զբոսաշրջիկի հաշվով միջին ծախսերի 25 տոկոս նվազմամբ (գծապատկեր 4)՝ 2023 թվականի բարձր կատարողականից հետո: Եկամտային հաշվեկշռի վատթարացումը, որը հիմնականում պայմանավորված էր արտերկրից դրամական փոխանցումների 28 տոկոս նվազմամբ, ևս նպաստել է ընթացիկ հաշվի մնացորդի նվազմանը:[1]

Սեպտեմբերին ՀՀ դրամը գրեթե կայուն է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ և աննշան արժևորվել է ռուբլու նկատմամբ: 2023 թ. սեպտեմբերի համեմատ՝ ՀՀ դրամ-ԱՄՆ դոլար փոխարժեքը 1.5 տոկոսով (տ/տ) ավելի ուժեղ է եղել, իսկ ՀՀ դրամ-ռուբլի

[1] Վճարային Հաշվեկշռում 2023 թ. և 2024 թ. -ի առաջին կիսամյակում վկայում են մեծ թվով զուտ սխալների և բացթողումների մասին, ինչը կարող է շեղել վերլուծությունը: Զուտ սխալներն ու բացթողումները կմաքրվենն տարեկան հաշվետվություններում:

Կազմեցին ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը, amanookian@worldbank.org, amanookian@worldbank.org և տնտեսագետ Վիկի Չեմուտայը, vchemutai@worldbank.org

փոխարժեքը 3.7 տոկոսով (տ/տ) թույլ է եղել: ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է արտարժույթ ձեռք բերել շուկայից՝ փոխարժեքի կտրուկ տատանումները հարթեցնելու համար: Սեպտեմբերին միջազգային պահուստներն աննշան նվազել են (39 միլիոն ԱՄՆ դոլարով)՝ ներմուծման ծածկույթը հասցնելով 2.3 ամսվա, ինչն ամենացածրն էր անցած տասնամյակում:

Օգոստոսին առևտրային բանկերի ավանդներն ու վարկերն ավելացել են, համապատասխանաբար, 0.3 տոկոսով (ա/ա ՝ տվյալ ամիսը՝ նախորդ ամսվա նկատմամբ) և 3 տոկոսով (ա/ա), ինչին հիմնականում նպաստել են ՀՀ դրամով արտահայտված ֆոնդերը: 2023 թվականի համեմատ փոխարժեքով ճշգրտված ավանդներն օգոստոսին ավելացել են 9.9 տոկոսով (տ/տ), իսկ վարկերն ավելացել են 19.9 տոկոսով (տ/տ) (գծապատկեր 5): Դա վարկ-ավանդ գործակիցը 2023 թ. օգոստոսի վերջի 0.89 տոկոս ցուցանիշից բարձրացրեց մինչև 0.93 տոկոս՝ 2024 թ. օգոստոսի վերջի դրությամբ, ինչը դեռևս 1 տոկոսից ցածր է: Ֆինանսական ցուցանիշները պահպանել են կայունությունը. Կապիտալի համարժեքության գործակը (ԿՀԳ) եղել է կայուն

20.3 տոկոս՝ ինչպես հուլիսին էր: Չաշխատող վարկերի գործակիցը պահպանվել է ցածր՝ 1.3 տոկոս մակարդակում, իսկ ակտիվների եկամտաբերությունը հասել է 4.6 տոկոսի, և երկուսն էլ 0.1 տոկոսային կետով ավելի բարձր են, քան հուլիսին:

Օգոստոսին գրանցվել է 26.5 միլիոն ՀՀ դրամ պակասուրդ (տ/տ), որն ընդհանուր պակասուրդը հասցրել է տարեկան կանխատեսված ՀՆԱ-ի 0.8 տոկոսին: Անվանական արտահայտությամբ՝ հարկային մուտքերը (այդ թվում՝ հիփոթեքի մասով եկամտային հարկի վերադարձը) օգոստոսին ավելացել են 11.1 տոկոսով (տ/տ): Բնապահպանական, շրջանառության և ակցիզային հարկերը գրանցել են աճի ամենաբարձր տեմպը, համապատասխանաբար, 40 տոկոս (տ/տ), 31 տոկոս (տ/տ) և 18 տոկոս (տ/տ): Ընդհանուր ծախսերն օգոստոսին ավելացել են 10.5 տոկոսով (տ/տ)՝ պայմանավորված հիմնականում սոցիալական պաշտպանության ոլորտի հատկացումներով, որը 29 տոկոսով ավելացավ (տ/տ) փախստականներին տրամադրվող աջակցության լրացուցիչ ծախսերի պատճառով: Միևնույն ժամանակ, կապիտալ ծախսերն օգոստոսին նվազեցին 0.5 տոկոսով (տ/տ): Հանրագումարում՝ հարկային մուտքերն ավելացան

8.8 տոկոսով: Այնուամենայնիվ, չհաշված հիփոթեքային վարկերի մասով եկամտային հարկի վերադարձը (համադրելի անցած տարվան)՝ ընդհանուր հարկային եկամուտներն ավելացան ընդամենը 5.3 տոկոսով (տ/տ), իսկ ընդհանուր ծախսերն ավելացան 16 տոկոսով (հիփոթեքային վճարումների սալդոյով): Սա բյուջեի պակասուրդը հասցրեց 84.6 միլիարդ ՀՀ դրամի՝ 2023 թ. նույն ժամանակահատվածի 71.6 միլիարդ ՀՀ դրամ հավելուրդի համեմատ (գծապատկեր 6):

Գծապատկեր 1. Աճը չափավորվեց՝ օգոստոսին հասնելով 5.6 տոկոսի

(Հայաստանի տնտեսական ակտիվության ինդեքս, փոփոխությունը տ/տ, %)



Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումները մնացին կայուն, սակայն 2023 թ. ցուցանիշից ցածր

(հազար ԱՄՆ դոլար, ՆԱՀ)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. Գնաճը սեպտեմբերին նվազեց

(ՍԳՀ գնաճ, տ/տ, փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 4. Զբոսաշրջային ժամանումների թիվը և զբոսաշրջային ծառայությունների ներհոսքը նվազեց 2024թ. առաջին կիսամյակում (տ/տ)

(միլիոն ԱՄՆ դոլար) (հազար զբոսաշրջիկի հաշվով)

Աղբյուրը՝ ԲՕՊ և Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 5. Առևտրային բանկերի ավանդներն ու վարկերը շարունակեցին աճել՝ վարկերի ավելի

Գծապատկեր 6. Բյուջեի պակասուրդ գրանցվեց օգոստոսին՝ նախորդ տարիների հավելուրդի

արագ աճով

(տոկոս, տ/տ, փոխարժեքով ճշգրտված)



Աղբյուրը ՝ ՀՀ ԿԲ

համեմատ

(միլիարդ ՀՀ դրամ)



Աղբյուրը ՝ Ֆինանսների նախարարություն